

## Իրանի Իսլամական Հանրապետության ռազմական արդյունաբերության և ռազմատեխնիկական համագործակցության հիմնախնդիրները

**ԱԶԱՏ ՂԱՎԹՅԱՆ**, տնտեսական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի անդամ

Վերջին 30 տարիների ընթացքում կասկած չի հարուցում Իրանի ռազմական արդյունաբերության զարգացման ցատկային թռիչքները: Գտնվելով միջազգային պատժամիջոցների ազդեցության տակ Իրանը ստիպված էր կենտրոնացնել իր ջանքերը սեփական ռազմական արդյունաբերության զարգացման վրա: Վերջին մի քանի տասնամյակում իրականացվել է Իրանի ՌԱՀ-ի հիմնարար վերակազմակերպում, ստեղծվել են նոր ձեռնարկություններ, ակտիվորեն իրականացվել է սպառազինությունների և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) բաղկացուցիչ մասերի մշակում և արտադրություն:

Մինչև 1979 թ. իսլամական հեղափոխության հաղթանակը Իրանը իր ռազմական գնումները իրականացնում էր գերազանցապես Արևմտյան երկրներից՝ նախապատվությունը տալով հիմնականում ամերիկյան արտադրանքին: Այդ ժամանակահատվածում Իրանի գլխավոր ռազմատեխնիկական գործընկերներից էր նաև Իսրայելը: Հեղափոխությունից հետո ռազմատեխնիկական ավանդական գործընկերների հետ կապերը խզվել են, ինչը հանգեցրել է ՍՌՏ-երի մատակարարումների վերակողմնորոշման և սեփական ՌԱՀ-ի արագացված զարգացմանն ուղղված քաղաքականության իրականացման: Իրանի ռազմական արդյունաբերության ոլորտում ամենանշանակալի փոխակերպումները տեղի են ունեցել 1990-ական թվականներին, երբ իրանա-իրաքյան 1980–1988 թթ. պատերազմի ավարտից հետո առաջացել էր երկրի զինված ուժերի վերականգնման անհրաժեշտություն<sup>1</sup>: Մինչ այդ արդեն 1985 թ. ռազմական արդյունաբերության ձեռնարկությունների թիվը համեմատած 1975 թ.-ի հետ ավելացել է ավելի քան 1.5 անգամ: Վերաստեղծվել է Պաշտպանական

<sup>1</sup> Sten Sajhin B. I., Bondaryu Yu. M., Voennaya moysh' Islamskoy Respubliki Iran, 2014, <https://book.ivran.ru/f/sazhin.pdf>

արդյունաբերության կազմակերպությունը, որը 1992 թ. արդեն միավորում էր 240 պետական ռազմական, ինչպես նաև 12000 մասնավոր ձեռնարկություններ<sup>2</sup>:

Սեփական արտադրության հաշվին 1990-ականների կեսերին Իրանը արդեն բավարարում էր սպառազինությունների և զինամթերքների պահանջարկի ավելի քան 85-90%-ը: Ավելին, Իրանի ռազմական արդյունաբերության արտադրական հզորությունները թույլ են տվել իրականացնել կրակային որոշ զինատեսակների, զինամթերքների և առանձին հրետանային համակարգերի արտահանում:

Ներկայումս Իրանի ռազմական արդյունաբերությունը ներառում է ՍՌՏ-երի արտադրության գործնականում բոլոր ոլորտները՝ ռազմաքիմիական, հրթիռաշինական, ավիացիոն, զրահատանկային, հրետանային, հրաձգային, նավաշինության, ռադիոէլեկտրոնային և այլն: 2007 թ.-ից Իրանը իրենց հրթիռակիրներով արբանյակներ է բաց թողնում տիեզերական ուղեծիր<sup>3</sup>:

Վերջին 12 տարիների ընթացքում իրականացվել է ռազմական արդյունաբերության համակարգի կառուցվածքային վերակազմակերպում, այդ թվում՝ մի շարք հնացած ՍՌՏ-երի տեսակների թողարկման դադարեցում: Սկզբունքորեն նոր պահ էր կողմնորոշումը դեպի սպառազինությունների տեխնոլոգիապես բարդ օրինակների արտոնագրված օրինակների արտադրության զարգացմանը: Ընդ որում՝ հիմնական շեշտը դրվում է նոր տեխնոլոգիաների ձեռք բերման, ժամանակակից սպառազինությունների համակարգերի լայնամասշտաբ արտադրության կազմակերպման և արտասահմանի ՍՌՏ-երի մատակարարումներից երկրի կախվածության նվազման վրա: 1997 թ.-ից մեկնարկում է Իրանի զինված ուժերի շինարարության հայեցակարգային ծրագրերը միջնաժամկետ (5 տարի ժամկետով) և երկարաժամկետ (25 տարով) հատվածում<sup>4</sup>:

Այսպիսով, 1990-ական թվականներից ռազմական ոլորտում ինքնաբավության հասնելու համար Իրանի ղեկավարության կողմից կարևորվում են զարգացման հետևյալ ուղղությունները.

- Տեխնոլոգիաների գնում և ուսումնասիրում, ձեռք բերված զենքի և ռազմական տեխնիկայի, ինչպես նաև հրթիռային համակարգերի օրինակների արտադրություն,

<sup>2</sup> Տես նույն տեղում:

<sup>3</sup> Տես Об опыте Ирана по созданию «экономики сопротивления», 2016, <http://iran-tpprf.ru/?p=253>

<sup>4</sup> Տես Сажин В. И., Бондарь Ю. М., Военная мощь Исламской Республики Иран, 2014, <https://book.ivran.ru/f/sazhin.pdf>

- Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-երի) ընդլայնում՝ արտասահմանյան հետազոտությունների արդյունքների ներդրմամբ,
- Բոլոր տեսակի զենքի և ռազմական տեխնիկայի միջին և կապիտալ վերանորոգման աշխատանքների յուրացում,
- Պահեստային մասերի և ռազմական տեխնիկայի բարդ տեսակների բաղադրիչների արտադրություն,
- Սպառազինական համակարգերի բոլոր տեսակների զինամթերքների արտադրության ընդլայնում<sup>5</sup>:

Պատժամիջոցների առկայության ամբողջ ժամանակահատվածում ժամանակակից արտասահմանյան տեխնոլոգիաները Իրանը ներգրավել է տարբեր միջոցներով, այդ թվում՝ նաև կաշառքի և «ազգային դիվանագիտության» միջոցով: Իրանցի մասնագետները մեկնել են արտասահման որպես մասնավոր անձիք, ընտրել և գնել են անհրաժեշտ ապրանքները կամ ամբողջ արտադրության տեխնոլոգիական հոսքագիծը: Դրանց ներկրման ճանապարհները տարբեր են եղել, այդ թվում՝ Հնդկաստանի, Չինաստանի, Թուրքիայի և ԱՄԷ-երի տարածքով:

Ամենակարևորն այն է, որ Իրան ներկրված պատժամիջոցների տակ գտնվող նոր տեխնոլոգիաները, սարքավորումները և այլ անհրաժեշտ բարձր տեխնոլոգիական ապրանքները միանգամից ներդրվել են արտադրական ձեռնարկություններում, որտեղ պետական ֆինանսավորմամբ և վերահսկողությամբ յուրացվել է դրանց հետագա արտադրությունը: Դրան զուգահեռ մեծ թափ է առել քաղաքացիական շատ ոլորտների և գիտության զարգացումը:

Իրանը ոչ միայն իրեն ապահովում է սպառազինությունների հիմնական տեսակներով, այլ նաև արտահանում է դրանք աշխարհի 30 երկրներ: Բոլորովին վերջերս, օրինակ՝ Իրանը

<sup>5</sup> Տես Военный потенциал Исламской Республики Иран, 2010, <http://arevelkcenter.com/archives/563>

հրաժարվել է Ռուսաստանից T-90 տանկի գնումից՝ սկսելով սեփական տանկի արտադրությունը՝ ձեռք բերելով որոշ տեխնոլոգիաներ Չինաստանից<sup>6</sup>:

Իրանի ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ԳՀՓԿԱ-երի իրականացմանը: Երկրում ստեղծված է պետական կազմակերպությունների համալիր համակարգ, որը ներառված է ԳՀՓԿԱ-երի ոլորտում ռազմական և քաղաքացիական կառույցների գործունեության կոորդինացման գործում: Ռազմական ԳՀՓԿԱ-երի ծրագրերի իրագործումը անմիջականորեն դրված է գիտահետազոտական կենտրոնների և Իրանի ՌԱՀ-ի ձեռնարկությունների վրա: Այս համատեքստում, իրականացվում են զինված ուժերի կոնկրետ տեսակի շահերին համապատասխան աշխատանքներ՝ նոր նմուշների արտադրության, առկա սպառազինությունների վերանորոգման, արդիականացման, տեխնոլոգիաների յուրացման և այլ ուղղություններով: ԳՀՓԿԱ-երի գծով նպատակային պատվերները տրվում են մասնագիտացված համալսարաններին, գիտահետազոտական ինստիտուտներին և պաշտպանության նախարարության ներքո գործող կենտրոններին<sup>7</sup>:

Ռազմական ԳՀՓԿԱ-երի ոլորտում որպես գլխավոր խնդիրներ որոշվել են առաջավոր տեխնոլոգիաներ տիրապետող երկրների հետ համագործակցության ակտիվացումը, արտասահմանից ՍՌՏ-երի գնումներից կախվածության նվազումը, ռազմական ոլորտում նշանակալի գիտաարտադրական ներուժի ստեղծումը, այդ թվում՝ այլ երկրներում իրանցի մասնագետների պատրաստման ճանապարհով:

Ընդհանուր առմամբ, պետական և ռազմական մարմինների ստեղծված կառուցվածքը թույլ է տալիս Իրանի զինված ուժերի շահերից ելնելով լուծել ԳՀՓԿԱ-երի պլանավորման և գործնական իրագործման խնդիրներ: Դրան զուգահեռ, այդ համակարգը ունի մի շարք վարչական և կառավարչական բնույթի լուրջ խնդիրներ, որոնք բացասաբար են ազդում աշխատանքի արդյունավետության վրա: Մասնավորապես, ԳՀՓԿԱ-երի տարբեր մակարդակներում կրկնվող և զուգահեռ ֆունկցիաներ կատարող կառույցների չհիմնավորված առկայությունը, գոյություն ունեցող բյուրոկրատական ապարատը, ղեկավար մարմինների կողմից ԳՀՓԿԱ-երի ծրագրերի լոբբին, գերատեսչական շահերի բախումը (օրինակ՝ ԳՀՓԿԱ-երի ծրագրերի տեղաբաշխման, դրանց ֆինանսավորման և

<sup>6</sup> Ств Об опыте Ирана по созданию «экономики сопротивления», 2016, <http://iran-tpprf.ru/?p=253>

<sup>7</sup> Ств Авиацонная промышленность Ирана, 2012, <http://www.modernarmy.ru/article/195>

այլ հարցերում բանակի և իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի միջև մրցակցությունը) վնասում են Իրանի ռազմարդյունաբերության զարգացմանը<sup>8</sup>:

ԳՀՓԿԱ-երի ոլորտում ռազմական և քաղաքացիական կառույցների գործունեությունը կոորդինացնող հիմնական մարմինը հանդիսանում է երկրի նախագահին կից գիտատեխնիկական համագործակցության կոմիտեն: Ռազմական ԳՀՓԿԱ-երի գծով այդ կոմիտեի հիմնական ֆունկցիան կայանում է երկրի ղեկավարությանը ռազմական արտադրության առանցքային ուղղություններով առաջարկությունների ներկայացումը: Առաջարկությունների մշակումը իրականացվում է Գլխավոր շտաբի փորձագետների, Բանակի գլխավոր հրամանատարության, իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի, պաշտպանության նախարարության, ինչպես նաև էլեկտրոնային, աէրոտիեզերական և արդյունաբերության այլ ոլորտների կազմակերպությունների և շահագրգիռ նախարարությունների մասնակցությամբ: Բացի դրանից, Իրանի պաշտպանության նախարարությունը ինքնուրույն կամ պաշտպանական, ավիացիոն, աէրոտիեզերական և էլեկտրոնային արդյունաբերության կազմակերպության կենտրոնական ապարատի, բանակի գլխավոր կոմիտեի, իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի և Գլխավոր շտաբի հետ սահմանում է ԳՀՓԿԱ-երի նյութատեխնիկական, ֆինանսական և կադրային ապահովման խնդիրները: Անհրաժեշտության դեպքում պաշտպանության նախարարությունը իր վարչությունների միջոցով ձեռնամուխ է լինում տեխնոլոգիաների, բաղկացուցիչ մասերի, հումքի և նյութերի ձեռքբերման, ինչպես նաև իրանցի մասնագետների և օտարերկրյա գիտնականների փոխադարձ այցերի և ազգային գիտատեխնիկական կադրերի արտասահմանում վերապատրաստվելու կազմակերպման: Դրան զուգահեռ պաշտպանության նախարարությունը իրականացնում է նախատեսված ծրագրերի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումներ Իրանի կենտրոնական բանկի, տնտեսական բլոկի նախարարությունների և այլ գերատեսչությունների ներգրավմամբ: Իրանի կառավարության կողմից առաջարկությունների հաստատումից և համապատասխան կարգադրության հաստատումից հետո սկսվում է նախագծի գործնական իրագործման փուլը<sup>9</sup>:

---

<sup>8</sup> Տես նույն տեղում:

<sup>9</sup> Տես նույն տեղում:

2013 թ. Իրանի հոգևոր առաջնորդը, ի պատասխան Իրանի հանդեպ տնտեսական պատերազմի, դիմել է իրանցիներին և հայտարարել «դիմադրության տնտեսություն» ծրագրի մշակման մասին: «Դիմադրության տնտեսություն» ծրագրում Իրանի արտաքին քաղաքականության առանցքային գործոն է երկրի կապերի վերակողմնորոշումը ասիական գործընկերների և հարևան երկրների հետ, ինչպես նաև արտաքին առևտրում դուլարային հաշվարկներից հրաժարումը: Հարևան երկրների հետ համագործակցության կապող օղակ է ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, որոնց թիվը երեք տարում ավելացել է 5 անգամ (Իրանում դրանք հիմա 50 են)<sup>10</sup>:

Այլ երկրների հետ ռազմատեխնիկական կապերի ձևավորման ուղղությամբ Իրանը կիրառում է դիֆերենցիացված մոտեցում՝ պայմանականորեն բաժանելով այդ երկրները մի քանի խմբերի.

- Առաջին՝ երկրներ, որոնք հանդիսանում են ՄՈՏ-երի պատրաստի օրինակների, ինչպես նաև ռազմական և երկակի նշանակության տեխնոլոգիաների ձեռք բերման աղբյուրներ: Այդ երկրների ցանկի մեջ մտնում են Ռուսաստանը, Չինաստանը, Ուկրաինան, Բելառուսը,
- Երկրորդ՝ երկրներ, որոնք հանդիսանում են իրանական արտադրության սպառազինությունների որոշ տեսակների պոտենցիալ գնորդներ (Թուրքմենստան, Տաջիկստան, Հայաստան, Սիրիա, Սուդան),
- Երրորդ՝ երկրներ, որոնց հետ ռազմատեխնիկական կապերը դժվարացված են կամ անհնար են քաղաքական կամ այլ պատճառով (Ղազախստան, Ուզբեկստան, Ադրբեջան և Վրաստան)<sup>11</sup>:

Ակնհայտ է, որ Թեհրանի համար ամենամեծ հետաքրքրությունն է ներկայացնում առաջին խմբի երկրների հետ համագործակցությունը, առաջին հերթին՝ Ռուսաստանի հետ, որը տիրապետում է ՌԱՀ-ի նշանակալի ներուժի, բարձրորակ գիտատեխնիկական կադրերի և

<sup>10</sup> Ств Об опыте Ирана по созданию «экономики сопротивления», 2016, <http://iran-tpprf.ru/?p=253>

<sup>11</sup> Ств Сажин В. И., Бондарь Ю. М., Военная мощь Исламской Республики Иран, 2014, <https://book.ivran.ru/f/sazhin.pdf>

ընդունակ է առաջարկելու սպառազինությունների և տեխնոլոգիաների ժամանակակից օրինակներ: ԱՊՀ երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության հատուկ ասպեկտ է այն, որ Թեիրանը օգտագործում է այդ երկրների գիտատեխնիկական ներուժը ազգային ՌԱՀ-ի զարգացման համար՝ շրջանցելով համագործակցության պաշտոնական ձևերը:

Եղել են դեպքեր, երբ իրանցիները օգտագործում են ԱՊՀ երկրների տարբեր առևտրային կառույցները որպես միջնորդներ սպառազինությունների, բաղադրիչ մասերի, ռազմավարական հումքի և նյութերի ձեռք բերման համար: Այսպես, ադրբեջանական միջնորդների միջոցով իրանցիները փորձում էին ներկրել բարձրորակ պողպատ, որը կիրառվում է ռազմական արտադրությունում:

Իրանի կողմից իրականացվում է մասնավոր և գերատեսչական պայմանագրերով հրթիռաշինության, ինքնաթիռաշինության և այլ ոլորտներում ԱՊՀ երկրներից մասնագետների ներգրավման նպատակաուղղված քաղաքականություն:

Բացի դրանից, պետք է նշել, որ ներկայումս Իրանը մտադիր է շահավետորեն օգտագործել այն տնտեսական դժվարությունները, որոնք ունեն Ռուսաստանը և ԱՊՀ այլ երկրները՝ հաճախ այդ երկրներից ձեռք բերելով սպառազինություններ իջեցված գներով: Հայաստանի, Թուրքմենստանի և Տաջիկստանի հետ հարաբերություններում ռազմատեխնիկական համագործակցությունը Թեիրանի կողմից դիտվում է երկրի ընդհանուր ռազմաքաղաքական կուրսի շրջանակներում: Ձգտելով այդ երկրների հետ ամրապնդել իր քաղաքական և տնտեսական կապերը, ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում Իրանը ցուցադրում է համագործակցության իր պատրաստակամությունը՝ առաջարկելով իրանական արտադրության ՍՌՏ-երի որոշ տեսակներ (հրաձգային զենք, զինամթերք, ականանետեր և այլն):

Ընդհանուր առմամբ, Իրանի ռազմատեխնիկական համագործակցության ընդլայնման համար առկա են հետևյալ հիմնական գործոնները.

- Իրանի ձգտումը դառնալու Միջին Արևելքում և Պարսից ծոցի գոտում տարածաշրջանային առաջատար,
- Արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ձեռք բերել մեծ ինքնուրույնություն,

- Դիմակայել Իրանի շահերին դեմ պոտենցիալ սպառնալիքներին, որոնք գալիս են հարևան երկրներից,
- Իր ռազմական հզորությունը հանդիմանել ամերիկամետ տրամադրությամբ պետություններին (Իսրայել, Թուրքիա, ԱՄԷ),
- Պարիտետի ձեռք բերում տարածաշրջանային ուժային կենտրոնների հետ (Պակիստան, Թուրքիա),
- Իսլամական հեղափոխության արտահանում այլ երկրներ:

Ազգային ՌԱՀ-ի նորացման և զարգացման նպատակով Իրանը հատուկ ուշադրություն է դարձնում արտասահմանում ընդհանուր և երկակի նախանշանակման տեխնոլոգիաների, հաստոցային ժամանակակից սարքավորումների, բարձրորակ հումքի և նյութերի գնմանը: Այս համատեքստում, նախապատվությունը տրվում է Գերմանիայի, Ավստրիայի, Շվեյցարիայի, Իտալիայի և Ճապոնիայի գործընկերներին: Ընդ որում՝ իրանցիները նպատակ ունեն եվրոպական երկրների մատակարարումների դիմաց վճարել գեղջված մեխանիզմով և նավթով վճարումով, ինչը ներկայիս պայմաններում մեծապես նախապատվելի է Թեհրանի համար:

Վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը հանդիսանում է Իրանի քաղաքական, տնտեսական և ռազմավարական հիմնական գործընկերներից մեկը: Իրանի և Չինաստանի միջև պաշտպանության ոլորտում համագործակցության սկզբը դրվել էր դեռևս Իրաքում պատերազմի տարիներին: Պատերազմի ավարտից հետո պաշտպանական համագործակցության ոլորտում Չինաստանը դարձավ Իրանի ամենավստահելի գործընկերներից մեկը: Ներկայիս պայմաններում Իրանի և Չինաստանի միջև տնտեսական և քաղաքական համագործակցության հիմքում ընկած գործոններն են ԱՄՆ-ի ռազմական միջամտությունը և միակ գերտերության կարգավիճակով հանդես գալը, ծայրահեղականության, ահաբեկչության, ինչպես նաև առևտրային նավագնացության հետ կապված սպառնալիքները: Իրանի համար առանձակի հետաքրքրություն է ներկայացնում ամուր հրթիռային վառելիքի արտադրության չինական



տեխնոլոգիաները, որոնք Թեհրանը ցանկանում է կիրառել սեփական բալիստիկ հրթիռների մշակման գործում<sup>12</sup>:

Իրանի և Չինաստանի ռազմատեխնիկական համագործակցության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Պեկինը մատակարարում է ոչ միայն զենքի պատրաստի օրինակներ, այլ նաև Իրանին է փոխանցում մի շարք տեխնոլոգիաներ: Չինաստանը նպաստում է Իրանի ՌԱՀ-ի զարգացմանը, որը ընդունակ կլինի թողարկել ժամանակակից մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռներ, հրետանային համակարգեր, մարտական նավեր և նավակներ: Իրանը իր հերթին հանդիսանում է դեպի Չինաստան նավթի հիմնական արտահանողներից մեկը: Իրանի մասնաբաժինը կազմում է Չինաստան արտահանվող նավթի մոտավորապես 1/4-ը<sup>13</sup>:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո Արևմտյան պետությունների հետ առևտրատնտեսական հարաբերությունների կտրուկ անկումից և միջազգային տնտեսական պատժամիջոցների ազդեցությունից Իրանը կրեց խոշոր տնտեսական կորուստներ, այդ երկրին հաջողվեց կառուցել և զարգացնել սեփական ռազմական արդյունաբերություն և տնտեսապես դառնալ Մերձավոր Արևելքի ամենաառաջատար պետություններից մեկը:

---

<sup>12</sup> Ств Сажин В. И., Бондарь Ю. М., Военная мощь Исламской Республики Иран, 2014, <https://book.ivran.ru/f/sazhin.pdf>

<sup>13</sup> Ств նույն տեղում: